

**ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՅՑ
(ախալքալաքցիների գաղթը 1918 թվականին)**

Շ. Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Հայ-վրացական հարաբերությունների պատմության մեջ առանձնահատուկ տեղ ունի 1918-1920 թվականների ժամանակաշրջանը, երբ երկու ինքնիշխան հանրապետությունները մինչ այդ նախադեպը չունեցող խիստ հակասական, իսկ երբեմն նույնիսկ թշնամական վերաբերմունք դրսևորեցին միմյանց հանդեպ: Այդպիսի իրավիճակի պատճառներից մեկն էլ դեպի Ծալկայի և Բակուրիանի լեռները գաղթած ախալքալաքցիների նկատմամբ վրաց կառավարության վարած դաժան և անմարդկային քաղաքականությունն էր:

Գաղթը՝ այդ դաժան ու սուկալի երևույթը, հայ ժողովրդի ճակատագրի մըշտական մասն է կազմել: Ինչպես Ս. Վրացյանն է գրում. «Նա (ժողովուրդը- Շ. Թ.) գաղթում, տնաքանդ էր լինում և ամեն գաղթի հետ կորցնում էր և՛ իր տղնտեսական ու բարոյական կորովը, և՛ մարդկային հավաքական կերպարանքը»¹:

Ախալքալաքցիները, ինչպես Լեոն է գրում, «... Փրկություն որոնելով թըշնամու սրից, կրակից, առևանգումներից ու բռնաբարություններից, պոկվեցին իրենց հողից ու փախան դեպի Բորժոմի կիրճը, բայց այստեղ մատնվեցին կատարյալ բնաջնջման»²: Գաղթականները 1918 թ. հունիսից մինչև դեկտեմբերի սկիզբը անցկացրին Ծալկայի և Բակուրիանի լեռներում ծանր և օրհասական վիճակում, լիակատար ֆիզիկական բնաջնջման վտանգի պայմաններում: Որպեսզի լիարժեք պատկերացնենք գաղթականների վիճակը, դիմենք արխիվային բազմաթիվ փաստաթղթերից մի քանիսին: Ծալկայի շրջանում գտնվող ախալքալաքցի գաղթականների՝ հուլիսի 21-ին Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Զամալյանին հղած խնդրագրում կարդում ենք. «Ծալկայի շրջանում ապաստարան գտած ախալքալաքցի 50 հազար հայ փախստականների վիճակը քանի գնում, ավելի ու ավելի վտանգավոր կերպարանք է ստանում: Մեր մոտ եղած հացի պաշարը արդեն վերջանում է: Գալիս է ձմեռը, և մենք չգիտենք, թե ինչպես պետք է ցրտերին ձյուններում բացօթյա ապրենք: Մեր ձեռքերում եղող անասունները կերի պակասության պատճառով ջարդվում են: Մի քանի ժամանակից հետո, երբ արոտատեղիները իսպառ կչորանան, մենք բոլորովին կզրկվենք այդ անասուններից և կդառնանք բառիս իսկական իմաստով մուրացկաններ: Եվ ումի՞ց ի՞նչ կարող ենք մուրալ այս ծանր օրերին: Մի խոսքով, ամբողջ վերոհիշյալ 50 հազար հայությունը բնաջնջ կլինի, եթե հապճեպ ձեռք չառնվեն փրկության միջոցներ»³: Նույն օրը Ա. Զամալյանին ուղարկած խնդրագրում Բակուրիանի գաղթականները գրում են. «Բակուրիանի անտառներում ապաստանած ախալքալաքցի հայ փախստականների վիճակը օրըստօրե դառնում է օրհասական... Փախստականների մոտ եղած

¹ Տե՛ս Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 13:

² Տե՛ս Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 407:

³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 8, թ. 121 (այս և հետագա փաստաթղթերից հղումները քերվում են առանց խմբագրման):

հացի պաշարները համարյա վերջացել են, ուստի սկսվել է իսկական սովի շրջանը, սովի, որ արդեն ձեռնամուխ է եղել կյանքեր հնձելուն...»⁴: Նկատենք, որ այս ծանր վիճակն առաջացել էր արդեն հուլիս ամսին, իսկ թե ինչպիսին կլինեն այն աշնանը և ձմեռնամուտին, դժվար չէ պատկերացնել՝ հաշվի առնելով Ծալկայի և Բակուրիանի լեռների բնակլիմայական դաժան պայմանները:

Նման կացությունը, բնականաբար, մտահոգում էր իրավիճակին քաջատեղյակ Վրաստանի Հայոց ազգային խորհրդին, որը ըստ կարելիվույն քայլեր էր ձեռնարկում դրությունը որոշ չափով շտկելու համար: Այդ է վկայում սեպտեմբերի 24-ին Վրաստանի վարչապետին Ազգային խորհրդի հղած գրությունը, որտեղ ասված է. «Վրաստանի Հայոց ազգային խորհուրդը իր պարտքն է համարում Վրաստանի կառավարության ուշադրությունը հրավիրել հայ փախստականների վիճակի վրա, որը օրըստօրե վատանում է, սպառնալով ողջ փախստական բնակչության ֆիզիկական գոյությանը, որոնք իրենց ապաստանն են գտել Վրաստանի տարածքում...»⁵: Գաղթականների ծանր վիճակն ու կրած զրկանքները ներկայացված են բազմաթիվ փաստաթղթերում, որոնցից առանձնապես ուշագրավ է 1918 թ. սեպտեմբերի 13-ին ՀՀ Թիֆլիսի դիվանագիտական ներկայացուցչությանը Ախալքալաքի հայկական հայրենակցական վարչության հասցեագրած փաստաթուղթը, որտեղ մասնավորապես կարդում ենք «...Փախստականները բոլորովին հաց չունեն, անասունները համարյա ոչնչացել են, նրանց մեջ մոլեգնում են տարբեր վարակիչ հիվանդություններ: Բաղքը, ցուրտը լեռներում, հիվանդությունները և տարաբնույթ այլ զրկանքները տառացիորեն հնձում են բնակչությանը»⁶:

Գաղթականների պարենավորման և բժշկասանիտարական օգնության գործը հիմնականում ընկած էր հայկական գաղթականական կազմակերպությունների ուսերին: Հարկ է նշել սակայն, որ վերջիններիս գործադրած ջանքերն, ըստ էության, շոշափելի արդյունք չէին տալիս, որովհետև կային մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ խանգարիչ հանգամանքներ: Օբյեկտիվ գործոններից ամենահիմնականներն էին Վրաստանում առկա պարենային ճգնաժամը, աֆսոսալի ցուրտը, բնակարանների և ընդհանրապես ծածկի բացակայությունը, պարենի ու դեղորայքի պակասը և այլն: Ցավոք, օբյեկտիվից բացի կային նաև սուբյեկտիվ պատճառներ, որոնցից նշելի է հատկապես վրացական իշխանությունների անբարեհաճ, եթե չասենք թշնամական, վերաբերմունքը: Այդ է վկայում թեկուզև Վրաստանում նոր նշանակված ՀՀ դեսպան Ա. Զամալյանի հետ Վրաստանի արտգործնախարար Ն. Ռամիշվիլու ունեցած գրույցի ընթացքում նրա արտահայտած այն միտքը, որ Վրաստանը պարենավորման տագնապի մեջ է, այլուրի փութը բարձրացել է արդեն 230 ոտբլու և օրըստօրե բարձրանում է: Նման պայմաններում մի քանի տասնյակ հազար նոր բերանների ներկայությունը Վրաստանում մտահոգություն է պատճառում կառավարությանը: Ժիշտ է, արտգործնախարարը զգալով, որ մատնում է իր կառավարության իրական մտայնությունը, այնուհետև փորձել է կեղծավորաբար շտկել սպավորությունը՝ ասելով, որ չնայած այդ ամեհին, իրենք պատրաստ են ամեն ինչ անելու հայ գաղթականների վիճակը բարելավելու համար, բայց ամեն ինչ պարզ էր: Բանն այն է, որ Վրաստանի կառավարությունը ոչ միայն ոչինչ չէր անում հայ գաղթականների վիճակը թեթևացնելու ուղղությամբ, այլև հաճախ հարուցում էր արհեստական արգելքներ, որոնք ի չիք էին դարձնում հայկական գաղթականական կազմակերպությունների ջանքերը, դրանով իսկ ավելի վատթարացնելով գաղթականների առանց այն էլ ծանր վիճակը: Օրինակ, հենց թեկուզ մոտիկ վայրերում գաղթականների հաստատման արգելումը

⁴ Նույն տեղում, թ. 122:

⁵ Նույն տեղում, թ. 76:

⁶ Նույն տեղում, թ. 78:

⁷ Տե՛ս նույն տեղը, գ. 36, թ. 16:

խիստ բացասաբար անդրադարձավ նրանց վիճակի վրա: Ավելին, վրաց կառավարությունն անդրդվելի մնաց նույնիսկ այն բանից հետո, երբ Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը սեպտեմբերի 24-ի վերը հիշատակված գրությամբ առաջարկեց թույլատրել Մալկայում և Բակուրիանում կուտակված գաղթականների վիճակը քիչ թե շատ թեթևացնելու նպատակով նրանց մի մասին բնակեցնել Վրաստանի հայաշատ շրջաններում: Այդ հանգամանքի վրա իրավացիորեն դեռևս ուշադրություն է դարձրել մեծանուն պատմաբան Լեոն. «...Գնանք Բակուրիանի լեռան գլուխը: Այստեղ Վրաստանի հպատակ հայերն են, Ախալքալաքի գավառից փախստականները: Նրանք չեն կարող մնալ օսմանցիների տիրապետության տակ, ուզում են անցնել Վրաստանի մի այլ կողմը կամ անցնել Հյուսիսային Կովկաս: Անկարելի է: Մենշևիկների գործը կանգնած է, չի թույլ տալիս իջնել սարից (ընդգծումն իմն է - Օ. Թ.): Հենց այդպես էլ այդ լեռնային խոշոր բարձրության վրա կազմվում է թշվառության մի բանակ, մահվան մի ճամբար»⁸:

Ուշագրավ է, որ վրաց մենշևիկյան իշխանությունը հայ գաղթականներին արգելել էր տեղափոխվել ոչ միայն Վրաստանի այլ շրջաններ, այլև Հյուսիսային Կովկաս: Գուցե և հասկանալի ու բացատրելի է Վրաստանի այլ շրջաններում հայ գաղթականների վերահաստատման հարցում դրսևորած մերժողական վերաբերմունքը, բայց աններելի է Հյուսիսային Կովկաս տեղափոխության արգելքը: Դա արդեն մատնում է նրանց հետին մտադրությունները, որոնք, մեղմ սասած, անմարդկային էին...

Ցավոք իրենի հետագա ընթացքը ցույց տվեց, որ, իսկապես, վրաց մենշևիկները հայ գաղթականների հանդեպ ցուցաբերած իրենց պահվածքով հետապնդում էին հեռուս գնացող տմարդի նպատակներ: Այդ է վկայում թեկուզև այն փաստը, որ նույն օրերին մենշևիկյան կառավարությունն արգելում էր հայ գաղթականների մուտքը նաև Լոռի՝ պատճառաբանելով, թե իբր որոշ վայրերում տեղի են ունեցել բախումներ փախստականների և տեղի մահմեդականների միջև, ինչպես օրինակ՝ Մանգլիսի շրջանում, և, որպեսզի խուսափեն մանատիպ բախումներից, վրաց արտգործնախարար Ն. Ռամիշվիլին հոկտեմբերի 2-ի գրությամբ առաջարկում էր հայկական կառավարությանը գաղթականների մի մասին տեղափոխել Հայաստան (կարծես Լոռին Հայաստան չէր), մի մասին բնակեցնել Արմավիրի շրջանի հայկական գյուղերում (Հյուսիսային Կովկաս), իսկ մի մասն էլ ժամանակավորապես կմնան իրենց գտնված վայրերում, և վրացական կողմն ամեն ինչ կանի նրանց անվտանգությունն ապահովելու համար⁹: Դրությունը չփոխվեց նաև Ն. Ռամիշվիլիում հոկտեմբերի 23-ին Թիֆլիսի ՀՀ դիվանագիտական ներկայացուցչի կողմից բողոք-պատասխան ուղարկելուց հետո: Այնտեղ մասնավորապես ասվում էր, որ նախկին Բորչալուի գավառի Լոռու տեղամասը Հայաստանի կառավարությունը Վրաստանի տարածքի մեջ մտած չի համարում և գտնում է, որ վրաց կառավարությունն իրավունք չունի արգելելու գաղթականների բնակեցումը Լոռու հայկական գյուղերում, իսկ եթե վերջինս այնուամենայնիվ արգելում է, ապա հայկական կառավարությունը դա համարում է ոչ թե իրավունք, այլ բռնություն¹⁰:

Արխիվային նյութերի ուսումնասիրությունը պարզապես զարմանք է հարուցում, թե հաճախ որքան ստոր ու երկերեսանի կարող են լինել քաղաքականությունն ու քաղաքական գործիչը: Եվ ինչպես չզարմանալ, երբ հայ գաղթականների «անվտանգությունն ապահովել» խոստացող վրաց մենշևիկներն իրականում ոչ միայն չէին կատարում իրենց «խոստումը», ոչ միայն արգելում էին նրանց տեղաշարժը դեպի Վրաստանի այլ շրջաններ ու Ռուսաստան, անգամ իսկ Հայաստան, այլև թույլ չէին տալիս իրենց դրամական միջոցներով

⁸ Լեո, նշվ. աշխ., էջ 409:

⁹ Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 55, թ. 105:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, թ. 77:

հաց գնել Վրաստանի տարածքում: Այդ է վկայում Ախալքալաքի հայրենակցական միության խնդրագիրը՝ ուղղված Թիֆլիսում ՀՀ դեսպանին: Մանրամասն նկարագրելով գաղթականների օրհասական վիճակը՝ հեղինակները գրում են. «...Փախստականության տեղաշարժման և Վրաստանի սահմաններում հաց գնելու դեմ եղած սահմանափակումները անելանելի կացություն են ստեղծում ժողովրդի համար...»¹¹:

Այս ամենից բացի, վրաց կառավարությունը հարուցել էր բազում այլ խոչընդոտներ ևս: Օրինակ, փախստականներին արգելված էր նաև իրենց ժամանակավոր գտնվելու վայրերում պարենամթերքի և այլ ապրանքների ազատ գնումներ կատարել, իսկ փախստականների կոմիտեին հնարավորություն չէր տրվում Բակուրիանի անտառներից անտառանյութ ձեռք բերել վառելանյութի, այլ տնտեսական պահանջների և ժամանակավոր կացարաններ կառուցելու համար: Գաղթականական կազմակերպություններին արգելված էր փախստականների կուտակված վայրերում բացել հիվանդանոցներ, որբանոցներ, անկելանոցներ, բուժման և սնման կետեր: Ավելին, փախստականների կարիքների համար ձեռքբերված ապրանքներն ու նրանց անասունները տեղական իշխանությունների կողմից ենթարկվում էին բռնագրավման, արգելվում էր դրանց տեղափոխումը երկաթուղային և խճուղային ճանապարհներով: Նույնիսկ Հայոց ազգային խորհրդին արգելվում էր ապրանքափոխանակության միջոցով գաղթականների համար ձեռք բերել մեծաքանակ սննդամթերք¹²: Զգոհանալով այսքանով՝ վրաց իշխանությունները հայ գաղթականական կազմակերպությունների գլխավոր խորհրդի գործունեությունը դժվարացնելու, գուցե և վիժեցնելու նպատակով բարդություններ էին ստեղծում նույնիսկ նրա ունեցած ֆինանսական միջոցների օգտագործման հարցում, որի պատճառով վերջինս չէր կարողանում ազատորեն տնօրինել պետական բանկի Թիֆլիսի գրասենյակի իր ընթացիկ հաշվի գումարները: Փաստորեն չէին թողնում սեփական փողերը սեփական կարիքների համար ծախսել: Բայց ամենամտթալին պարբերաբար կազմակերպվող բռնագրավումներն էին: Ասվածը հաստատելու համար բերենք միայն մեկ օրինակ: Հայ գաղթականական կազմակերպությունների գլխավոր խորհրդի Բակուրիանի շրջանի լիազոր Մելյանը հուլիսի 15-ին հեռագրում է Թիֆլիս իր վերադասին. «Այսօր անձամբ հայտնվեց ինտերնացիոնալ կոմիտեի նախագահը Բակուրիանի միլիտերի հետ միասին և պահանջեցին դադարեցնել ճապոնական սոյայի բաժանումը սոված հայ գաղթականներին և գլխավոր խորհրդից իմ անունով ամբողջ ստացվածքը փոխադրել ինտերնացիոնալ կոմիտեի պահեստը: Զօգնեցին նույնիսկ հորդորներ և ներկայացրած փաստաթղթերը՝ պարենավորման նախարարի կողմից թույլտվությունը իմ անունով ճապոնական սոյայի ուղարկման և Վրաստանի հանրապետության իշխանությունների անուցից ներքին գործոց նախարարության գրասենյակի կողմից հանձնարարականը փախստականներին օգնելու գործում բոլոր հնարավորություններով ինձ հետ համագործակցության վերաբերյալ: Այսպիսի պայմաններում աշխատել որպես լիազոր անհմար է»¹³: Հայկական միացյալ գաղթականական կազմակերպությունների գլխավոր խորհուրդը հուլիսի 18-ին Ա. Ջամալյանին ուղղված գրությանը, հիմք ընդունելով Մելյանի հիշյալ հեռագիրը, տեղեկացնում է, որ պարենամթերքի պարբերաբար կրկնվող բռնագրավումների հետևանքով, փաստորեն, կազմալուծվում է գլխավոր խորհրդի գործունեությունը: Ըստ այդմ, առաջադրելով մի շարք առաջնահերթ խնդիրներ, ի մասնավորի առաջարկում է դրանց իրականացման համար միջնորդել Վրաստանի կառավարության առաջ: Խնդրվում էր, որ այլևս թույլ չտրվեն

¹¹ Նույն տեղում, գ. 14, թ. 46:

¹² Տե՛ս նույն տեղը, գ. 8, թ. 77:

¹³ Նույն տեղում, թ. 142-143:

փախստականների կարիքների համար նախատեսված պարենամթերքի քրո-
նագրավումներ, գլխավոր խորհրդին իրավունք տալ փախստականների հա-
մար պարենամթերքի գնումներ կատարելու, ինչպես նաև ունեցած բեռները
տեղափոխելու երկաթուղով ու այլ հաղորդակցության ուղիներով, վերջապես՝
կարգադրել տեղական իշխանություններին, որպեսզի վերջիններս համագոր-
ծակցեն գլխավոր խորհրդի լիազորների և գործակալների հետ գաղթականնե-
րին պարենային օգնություն ցույց տալու գործում¹⁴:

Պետք է ասել, որ այս բռնագրավումներն ավելի վաղ էին սկսվել, և Թիֆ-
լիսի հայոց ազգային խորհուրդը դեռևս հուլիսի 12-ին հատուկ գրությամբ դիմել
էր Վրաստանի ներքին գործոց նախարարությանը, իսկ վերջինս չորս օր հետո՝
հուլիսի 16-ին, պատասխանել էր, որ արդեն հուլիսի 10-ից կարգադրված է
գաղթականների համար նախատեսված բեռները ազատել բռնագրավումից¹⁵։
Իրավամբ հարց է ծագում. եթե ճիշտ էր նախարարի պատասխանը, ապա ին-
չո՞ւ էին շարունակվում բռնագրավումները: Մնում է ենթադրել, որ կա՛մ տեղա-
կան իշխանությունները չէին ենթարկվում կենտրոնական կառավարությանը,
կա՛մ նրանց միջև կար ներքին պայմանավորվածություն: Հարկավ չէր բացառ-
վում առաջադրված տարբերակներից ոչ մեկը և ոչ էլ մյուսը, անգամ դրանց
միաժամանակյա հնարավորությունը, բայց փաստերի ուսումնասիրությունը
բերում է այն համոզման, որ ըստ էության ճշմարիտ է երկրորդ տարբերակը,
քանզի վրաց մենշևիկյան կառավարությունը հայ-վրացական հարաբերու-
թյուններում ընդհանրապես դրսևորում էր երկերեսանի գործելակերպ ու գոր-
ծելաոճ, այսինքն՝ անում էր մեկ բան, ասում կամ ներկայացնում էր այլ բան:
Այդ եմ վկայում շատ ու շատ-փաստեր: Օրինակ՝ Ծալկայից և Բակուրխանից
հայ գաղթականների տեղափոխության արգելումը, բանկային-ֆինանսական
դժվարությունների հարուցումը, գաղթականական կազմակերպությունների գըլ-
խավոր խորհրդի ակտիվ լիազոր ներկայացուցիչների (Մելյան, Խաչյան) բան-
տարկությունը¹⁶ և այլն:

Ավելին, պատմական փաստերի մանրակրկիտ վերլուծությունը թող-
նում է այն տպավորությունը, որ վրաց մենշևիկյան կառավարությունը հայ
գաղթականների նկատմամբ նման երկդիմի ու անմարդկային վերաբերմունք
դրսևորում էր թուրքական կողմի հետ համաձայնեցված: Բանն այն է, որ թուր-
քական զինվորական իշխանությունները, ասես վրացի մենշևիկների հետ խոսք-
ները մեկ արած, ամեն կերպ արգելում էին այսպիսի քայլերի գաղթականներին
վերադառնալու իրենց գյուղերը՝ պատճառաբանելով, թե «անցյալում տեղի ու-
նեցած թյուրիմացությունների հողի վրա կարող են հնարավոր լինել անկար-
գություններ հայ և մահմեդական ժողովուրդների միջև»¹⁷: Փաստորեն թուրքա-
կան արգելքները շարունակվեցին մինչև դեկտեմբերի սկզբները, այսինքն՝
մինչև այն ժամանակ, երբ Մուրդուսի զինադադարի պայմաններով ստիպված
էին ետ քաշվել մինչև 1914 թվականի սահմանները: Իհարկե մենք չունենք հայ
գաղթականների հարցում վրաց և թուրք իշխանությունների վարած նույնա-
նման քաղաքականությունների կապը հաստատող համապատասխան նյու-
թեր, բայց նախ բացառված չէ, որ լինեն այդպիսիք, երկրորդ հնարավոր էր
նաև բանավոր համաձայնություն: Այլապես ինչպե՞ս որակել այն փաստը, որ
թուրքերը չէին թողնում գաղթականներին վերադառնալ իրենց տները, իսկ
վրացիները չէին թողնում անցնել Վրաստանի խորքերը, ուստի նրանք սովից,
ցրտից և հիվանդություններից կոտորվում էին տասնյակ հազարներով:

Պատմագրության մեջ չի ճշգրտված նաև գաղթականների թվաքանակի
հարցը: Համաձայն որոշ աղբյուրների՝ գաղթականների ընդհանուր թիվը կազմել է

¹⁴ Տե՛ս նույն տեղը, թ. 141:

¹⁵ Տե՛ս նույն տեղը, թ. 117:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, թ. 68:

¹⁷ Նույն տեղում, գ. 14, թ. 28:

90 հազար, որից 50 հազարը Ծալկայում, իսկ 40 հազարը՝ Բակուրիանում¹⁸: Ուրիշ փաստաթղթերում հիշատակվում է 80 հազար թիվը¹⁹: Իմ կարծիքով, դրանցից ավելի հավանական է առաջինը՝ 90 հազարը, քանի որ, ինչպես հավաստում է Ռուբենը՝ վկայակոչելով Ե. Լալայանին, 1917 թ-ին Ախալքալաքի գավառում ապրել է 89 հազար հայ²⁰, որոնք, ըստ էության, բոլորն էլ գաղթել էին: Ինչ վերաբերում է մահացածների թվին, ապա այս հարցում ևս որոշ տարբերություններ են նկատվում աղբյուրների միջև: Ինքնին հասկանալի է, որ տարբեր հետազոտողներ, օգտվելով տարբեր աղբյուրներից, մահացածների թվաքանակի մասին արտահայտել են տարբեր, եթե չասենք հակասական, տեսակետներ: Օրինակ՝ սեպտեմբերի 13-ին կազմված մի գրության մեջ ասվում է, որ Ծալկայի և Բակուրիանի գաղթավայրերում մնացել է ընդամենը 70 հազար մարդ, որոնցից օրական մահանում է 200 հոգի²¹: Յոթ օր անց՝ սեպտեմբերի 20-ին, վիրահայ ազգային խորհրդին Ախալքալաքի հայրենակցական վարչության ուղարկած փաստաթղթում ասված է, որ «Բակուրիանում և Ծալկայում գտնվող 80 հազար հայ փախստականներից այժմ հազիվ 60 հազար հոգի է մնացել»²²: Իսկ սեպտեմբերի 24-ին ստեղծված մեկ այլ փաստաթղթի համաձայն գաղթականների թիվը կազմել է 65-70 հազար, իսկ օրական մահացողների թիվը՝ 300 հոգի²³: Վերջապես, սեպտեմբերի 30-ի թվակիր մեկ այլ փաստաթղթում մահացածների թիվը նշվում է մոտ 55 հազար²⁴:

Ջավախքահայերի գաղթի պատմությանը զբաղված մասնագետներից Ա. Սանոսյանը գտնում է, որ Ծալկայում և Բակուրիանում օրական մահացողների թիվը կազմում էր համապատասխանաբար 200-300 և 150 հոգի²⁵, իսկ Լեոն, չտարբերակելով երկու գաղթավայրերում մահացածների թվաքանակը, գրում է, որ «Մի ժամանակ ամեն օր կոտորվում էր միջև 600 երեխա»²⁶: Եթե նկատի ունենանք, որ ակնավոր պատմաբանը շեշտում է միայն երեխաների թիվը՝ ոչ ինչ չասելով մեծերի մասին, ապա պետք է ենթադրել, որ բոլոր միասին վերցրած կարող էր կազմել 1000 և ավելի մարդ, որը հազիվ թե վստահելի փաստ է: Ավելին, եթե ընդունենք, որ 600-ի մեջ ներառված են նաև մեծերը, ապա նորից այդ երկու տվյալների միջև եղած հակասությունը ակնհայտ է, որովհետև տարբերությունը կազմում է օրական 150-250, որը նույնպես հավանական չէ:

Ինչևէ, չխորանալով մանրամասների մեջ՝ առկա տվյալների քննական վերլուծության ճանապարհով հանգում ենք այն եզրակացության, որ Ծալկայում և Բակուրիանում ապաստանած 90 հազար հայ գաղթականներից փրկվել են շուրջ 50 հազարը, իսկ 40 հազարը զոհ է գնացել ցրտին, սովին ու հիվանդություններին: Փրկվածներից 40 հազար հոգի վերադարձել է հայրենի բնակավայրերը, իսկ 10 հազարը տեղափոխվել է Վրաստանի խորքերը և Հյուսիսային Կովկաս: Ինչ վերաբերում է մահացածներին, ապա նրանցից մոտ 7 հազարը զոհ է գնացել ամռան ամիսներին, իսկ մնացած 33 հազարը՝ աշնանը: Ընդ որում, սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին մահացել են շուրջ 18 հազար, իսկ նոյեմբերին 15 հազար հոգի՝ օրական միջին հաշվով համապատասխանաբար 300 և 500 մարդ:

¹⁸ Տե՛ս նույն տեղը, գ. 8, թ. 121, 122:

¹⁹ Տե՛ս նույն տեղը, գ. 14, թ. 27, 37:

²⁰ Տե՛ս Ռուբեն, Ախալքալաքի պայքարը, Դրօշակ, թ. 1:

²¹ Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 8, թ. 78:

²² Նույն տեղում, գ. 14, թ. 37:

²³ Տե՛ս նույն տեղը, գ. 8, թ. 76:

²⁴ Տե՛ս նույն տեղը, գ. 14, թ. 45:

²⁵ Տե՛ս Ա. Սանոսյան, Ախալցխայի և Ախալքալաքի գավառների 1918-ի ինքնապաշտպանությունը, Եր., 1992, էջ 199:

²⁶ Լեո, նշվ. աշխ., էջ 409:

Գիտական բարեխղճությունը պահանջում է ասել նաև, որ գաղթից չխուսափեց նույնիսկ Ախալքալաքի վրացական ազգաբնակչությունը: Ա. Սանոսյանը, հենվելով «Հատաջ» և «Հորիզոն» թերթերի տեղեկությունների վրա, գտնում է, որ վրաց գաղթականների թիվը, ներառյալ նաև Ախալցխայի գյուղերից գաղթածները, կազմել է 20 հազար, որից նույն պատճառներով զոհ է գնացել 10 հազարը²⁷: Հարկավ պետք է ենթադրել, որ մամուլի էջերում, ինչ-ինչ նկատառումներից ելնելով, բավականաչափ ուռճացված են փաստերն ու տեղեկությունները, մինչդեռ հայ գաղթականության ծանր վիճակը ներկայացնող փաստաթղթերում, ըստ էության, խոսք չկա վրաց գաղթականների մասին: Հետևաբար քիչ հավանական է այն տեսակետը, թե վրաց գաղթականները հայ գաղթականների հետ հավասարաչափ զրկանքներ են կրել: Հատկապես, ինչպես Ջավախքի պատմությամբ զբաղվող պատմաբան Ա. Մելքոնյանն է հավաստում, վրացի գաղթականները վրաստանի խորքերը տեղափոխվելու արտոնություն են ստացել գաղթից անմիջապես հետո²⁸: Բայց և այնպես մի բան պարզ է, որ քիչ չեն եղել նաև վրաց գաղթականների կորուստներն ու զոհերը, քանզի եթե եղել են գաղթ ու գաղթականություն, ապա անխուսափելի են զրկանքներն ու զոհերը:

Ինչպես ասվեց, հայրենի բնօրրանը վերադարձավ գաղթականների կեսից պակասը՝ 40 հազար մարդ: Հարկավ դյուրին չէր նաև վերադարձը, քանզի վրաց իշխանություններն ստեղծում էին բազմաթիվ դժվարություններ ու արգելքներ, որոնք հաղթահարելու համար նրանք ստիպված էին գործադրել անասելի ճիգ ու ջանք, մինչդեռ սովից, ցրտից ու հիվանդություններից հյուծված ու հոգնած գաղթականներից ոչ բոլորն էին իրենց մեջ ուժ գտնում պայքարելու հարուցված դժվարությունները հաղթահարելու համար, ուստի ստիպված էին լինում կատարելու այն, ինչ թելադրում էին վրաց իշխանությունները: Իսկ վերջիններիս նպատակը թե՛ գաղթից առաջ, թե՛ գաղթի ընթացքում և թե՛ դրանից հետո, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, Ջավախքի գրավումն էր, որի իրականացման ամենադյուրին եղանակը Ջավախքի հայաթափումն էր, որը, ցավոք, օգտվելով հայ ժողովրդի համար ստեղծված պատմական ծանր իրավիճակից, կարողացան իրականացնել եթե ոչ լրիվ, ապա հիմնականում:

Մ. Ա. ТОРОСЯН - Из истории армяно-грузинских отношений (беженство ахалкалакских армян 1918 года). - Вследствие нашествия турок в июне 1918 года армянское население Джавахка (90 тысяч человек) бежало в горные районы Цалка и Бакуриани. Беженцы оставались там до начала декабря, и почти половина их погибла от холода, голода и болезней. В родные места вернулось только 40 тысяч человек, еще 10 тысячам удалось добраться до отдаленных районов Грузии и до Северного Кавказа. Столь большие потери, кроме объективных обстоятельств, имели своей причиной бесчеловечную политику меньшевистского правительства Грузии, которое чинило всевозможные препятствия армянским беженским организациям, не позволяя им оказывать необходимую помощь вынужденным переселенцам. Изучение многочисленных архивных документов приводит к выводу, что конечной целью правительства Грузии было очистить Джавахк от армянского населения, что и было осуществлено если не в полной мере, то в весьма большой степени.

²⁷ Տե՛ս Ա. Սանոսյան, նշվ. աշխ., էջ 203:

²⁸ Տե՛ս Ա. Մելքոնյան, Ջավախք: Պատմության ուրվագծեր, Եր., 1999, էջ 27: